

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Միջոցով՝ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են: Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ: «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:




Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
 Հասցե՝ Վ.Սարգսյան 26/1, ՀՀ, Երևան, 0010, Էրեբունի Պլազա բլ. 4-րդ հարկ 411 ս.
 Հեռ.՝ (374 10) 58 23 21, 58 23 22
 Էլ. հասցե՝ info@fsm.am
 Ֆաքս՝ (374 10) 58 24 21
 կայք՝ www.fsm.am



Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ն հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից այն գործարքների համար, որոնց գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և միաժամանակ գույքային պահանջի հիմքով ներկայացրած բողոք-դիմումում նշված պահանջի դրամական արտահայտությունը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Դա նշանակում է, որ «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ն չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ն խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝ Վ.Սարգսյան 6, ՀՀ, Երևան, 0010
 Հեռ.՝ (374 10) 59 26 97
 Էլ. հասցե՝ chairman@cba.am
 Ֆաքս՝ (374 10) 56 54 96
 կայք՝ www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք գրկվում եք «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: